

# Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

## Որոշում

Ուսումնական գործընթացի ավտոմատացված համակարգի  
ներդրման վիճակը և խնդիրները  
/զեկ.՝ Վ.Մելքոնյան/

Արձանագրություն N 9, 16.05.2018թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով «Ուսումնական գործընթացի ավտոմատացված համակարգի ներդրման վիճակը և խնդիրները» զեկուցումը, արձանագրում է, որ ժամանակակից պայմաններում ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար չափազանց կարևոր են համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ կազմակերպումը և նորարարական ծրագրերով ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովող միջոցառումները:

Վերջին տարիներին համալսարանում իրականացվել են բոլոր հիմնական աշխատանքները SS ոլորտում ծրագրային, գործընթացային և տեխնիկական մակարդակներում ամուր բազա ստեղծելու նպատակով:

Ստեղծվել է համալսարանի էլեկտրոնային կառավարման համակարգ, իրականացվել են բոլոր անհրաժեշտ պիլոտային աշխատանքները, արդյունքում համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել բուհի հիմնական գործառույթների և ուսումնական գործընթացի ավտոմատացման ամբողջ շրջափուլը:

Գիտական խորհուրդը նշում է, որ համալսարանում ուսումնական գործընթացը արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ առավել արդյունավետ դարձնելու և առկա ծրագրերի հետագա զարգացման նպատակով նախատեսվում է շարունակել նախորդ տարիներին իրականացված միջոցառումների համախումբը և վերը նշված համակարգը ներդնել ամբողջ համալսարանի մակարդակով:

Այս ամենի հետ մեկտեղ առկա են նաև խնդիրներ, որոնք հիմնականում կապված են համալսարանի ուսանողության ու աշխատակազմի շրջանում նոր մեթոդների և ծրագրերի իրազեկման, յուրացման, ինչպես նաև դրանց ներդրման հետ:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հանձնարարել ռեկտոր Ա.Թարվերդյանին.

1.1 Մինչև ս.թ. հունիսի 1-ը ձևավորել հանձնախումբ և սահմանված կարգով ամրագրել յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանք-

ների կատարման համար համապատասխան պատասխանատուներին՝ համալսարանում համակարգի ամբողջական ներդրման համար:

2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու.Մարմարյանին և ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր Ս.Դավեյանին.

2.1 Մինչև ս.թ. հունիսի 30-ը ՏՏ և ԻԾ կենտրոնի հետ մշակել համակարգի ամբողջական ներդրման համար իրականացվելիք աշխատանքային քարտեզ-ժամանակացույց՝ ներառելով ստորաբաժանումների պարտականությունները:

2.2 Մինչև հուլիսի 30-ը ՏՏ և ԻԾ կենտրոնի և դեկանատների հետ մշակել էլեկտրոնային կառավարման համակարգով աշխատանքների իրականացման կանոնակարգ և ներկայացնել հաստատման:

2.3 Մինչև 2018 սեպտեմբերի 1-ը համակարգի լիարժեք ներդրման համար կազմակերպել նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ, մասնավորապես, չմուտքագրված աշխատակիցների տվյալների, ամբիոնների ծանրաբեռնվածությունների, առարկայական ծրագրերի և մյուս ելակետային տվյալների մուտքագրման գործընթացը:

3. Հանձնարարել ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Վ.Մելքոնյանին և Ֆակուլտետների դեկաններին.

3.1 Մինչև ս.թ. հուլիսի 10-ը կազմակերպել դեկանատների բոլոր աշխատակիցների և ամբիոնների անձնակազմների ուսուցման և վերապատրաստման աշխատանքները:

3.2 Բացի Տնտեսագիտական և Պարենամթերքի տեխնոլոգիաների դեկանատներից, մյուս բոլոր դեկանատներում, մինչև 2018թ. սեպտեմբերի 1-ը կազմակերպել բոլոր ուսանողների տվյալների ամբողջական մուտքագրման աշխատանքները, իսկ սեպտեմբերի 1-ից կազմակերպել ընթացիկ տեղեկատվության օպերատիվ մուտքագրումը և ԷԿՀ-ով տարվող աշխատանքների կազմակերպման ու վերահսկման գործընթացները:

4. Հանձնարարել ամբիոնների վարիչներին. Համակարգի ներդրման ամբողջ ընթացքում

4.1 Ամբիոնի բոլոր աշխատակիցների շրջանում կազմակերպել էլեկտրոնային համակարգին անցնելու վերաբերյալ գործընթացը,

նպաստել համակարգը յուրացնելու և աշխատանքները բնականոն կատարելու գործընթացներին:

4.2 Ապահովել ամբիոնի կողմից ելակետային տեղեկատվության մուտքագրման պատշաճ կատարումը, ամենօրյա հաշվառման, քննաշրջանների արդյունքների և մյուս անհրաժեշտ տեղեկատվության մուտքագրման, վերլուծության ու վերահսկման աշխատանքները:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա.Պ.Թարվերդյան

Գիտ. քարտուղար՝

Դ.Ս.Բալասանյան